

վտանգներ: Մեծ Հայքէն փախանք բոլոր  
 դասակիցներով, անջատարար, մին միւսէն  
 յետոյ: Երկու տարի կ. Պոլիս մնացինք:  
 Ապա Ս. Ժողովին հրամանով, Լեհաստան  
 անցանք, յուսալով դպրեվանք մ'ունենալ  
 ուսումնականներու համար: Հոն երեք  
 տարի տպրեցանք ողորմութեամբ: [Ընդ-  
 ամէնը] եօթը տարիներ անցան աղքատու-  
 թեամբ, սորվելու նպատակաւ՝ ինչ որ կը  
 հայր կաթողիկէ հաւատքին: Յիշեալ Ու-  
 կան Գերապայծառ վերադառնալով Հա-  
 յաստան 1641ին, ընդունուեցաւ հազարու-  
 մէկ նեղութիւններով. ուրիշներու արգիլ-  
 ուեցաւ իր ընկերութիւնը, որպէս զի չսոր-  
 վին կաթողիկէ դաւանանքը. սակայն ան  
 երբեք չէր դադրեր սորվեցնելէ: Յաճախ,  
 դարձեալ բանտարկուելու և վարդապետա-  
 կան աստիճանէ զրկուելու վտանգին մէջ  
 գտնուեցաւ: Եւ միշտ հաստատ մնաց կա-  
 թողիկէ ճշմարտութեան մէջ: Այս հալա-  
 ծանքները տեսցին մինչև 1658, երբ Գե-  
 րապայծառ Բիրոմալլի, կանչուած ըլլա-  
 լով Հռոմէական Եկեղեցւոյ հետ միութեան  
 մասին բանակցելու, համաձայնութեան մը  
 յանգեցաւ ներկայ պատրիարքին հետ: Առա-  
 ջին տարիներուն, այս պատրիարքը զինք  
 ամենէն աւելի հալածեց. սակայն յիշեալ  
 իրութեանն ետք, ցոյց տուաւ և կը շարու-  
 նակէ ցոյց տալ՝ թէ զինք կը սիրէ և իրեն  
 կը հետեւի հաւատքի մէջ. և նոյնին միջոցաւ  
 մեզ կը վստահացնէ իր անձնական որոճման